ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

(հոդվածի փոխարեն)

Երբ խոսում են Վրրաստանի
Թշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում հայտնի,
Եվ խորին ցավ, և ամոթ։

5 Ո՞չ ապաքեն գիտեն նրրա
Ոսոխները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ։

Թեև պատած հազար վերքով
10 Շատ ցավեր է նա տարել,
Բայց խաչակիր իրեն ձեռքով
Դեռ ոճիր չի կատարել։

Եվ իր ձեռքը եթե համառ
Տարածում է հին վրկան,
15 Ոչ թե դաժան գործի համար,
Այլ դեպ պայծառ ապագան։

Եվ ինչպես չեն տեսնում ոմանք
Նրրա ընթացքն աննրկուն,
Ո՞նց են ասում.– իր բախտի տակ
20 Նա ընկել է անկանգուն։

Ո՛չ ապաքեն Կովկասն անսաստ
Պատ է կանգնած մինչ երկին,
Որ չրհաղթի բուքը նրրան,
Ինչքան սուրա մոլեգին։

Ո՛չ ապաքեն Պոնտոսը հար
Շունչ է հոսում հով ու զով,
Որ նա հավետ մընա դալար,
Խորշակներից ապահով։

Եվ չե՞ն լըսել դեռ վըրացու
Երգը զըվարթ ու անհոգ,
Ո՞նց է ծաղրում նա մահացու
Ամեն հարված անողոք։

Երբ խոսում են իր անկումից,
Թըշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում անվերջ,
Եվ խորին ցավ, և ամոթ։